

նից քոց զի քաղցուենիք իցեն, և չարն անդէն մեռցի 'ի քեզ: Որ պատասխանի առնենէ խստութեամբ, մերժէ յինքենէ.... Օքանքաղցը և հաճոյական սիրեն մարդիկ: Օգոյշ լեր անձինքում զի մի պատասխանի տացես նենքութեամբ որ հարցանիցէ քեզ խորհուրդ: Տեր գատի ծշմարտութեամբ, և հատուցանէ ըստ գործոց: Խնամ կալ զընտիրս 'ի գոյից քոց նուիրել Ծեառն: Հորժամ յանուն Իշտուծոյ քո ուղղեցես զանձն քո՝ փառաւորեցէ և նա զհոգի քո, զի որք մեծացուցանեն զնա, փառաւորեցին 'ի նմանէ,,:

“ Նետեեալ հատուածն ալ կ'ուղղէ նոյն հեղինակը Ըստ աստուծոյն կամ արեւուն նշուլից: Ի՞ս խորհրդական լուսաւորը, պատկեր աստուածային լուսոյն, հին ատեն աստուածոց կարգ դասուած էր երկար ժամանակ՝ համարելով զայն հաւասար գերագոյն արարշին, և Եգիպտացիք իրենց պաշտօններուն մէջ չեին զանազաներ արեւը գերագոյն աստուծմէ, որուն յատուկ ածականները սեպուած էին: Ո՞իսյն, աներեսյթ, անմատոյց, ծնող յաւիտենական, ինքնաստեղծ, և արարիչ ամենայն արարածոց,,. և բոլոր այս հին երգերը կը սորվեցունէին աստուծոյն գերագոյն ստորոգելիքն:

“ Ըստ է տէր աշխարհիս. յերկինս աթոռ իւր և յերկրի պատկերը իւր: Իծագել նշուլից առաւոտուն մատուցանին յանուն նորա բուրմունք իննկոց: Արվաւ աձեցուն լինի ցորեան, և նա ետ քեզ զմայր քո: Արվաւ բազմածին եղեւ մայր քո, և ոչ պակասեցան յորդոց իմոց և ոչ մի: Իլրանալ ամսոց, 'ի ժամանակի ծնաւ և զքեզ մայր քո, փարեցար զպարանոցաւ նորա, և կաթամբ: իւրով սնոյց նա զքեզ զամներիս: Ո՞իմէ դժուարագոյնք 'ի ինամոցն պարտասեցուցին զսիրտ նորա, և փակեաց առ 'ի քէն զգութ իւր: Հորժամ ասացի, և ահա ետ զքեզ յուսումն, և մինչ ուսանէիրն ընթեռնուլ, յամենայն աւուր առ ուսուցի քո էր նա, բերելով 'ի տանէ զոգեպահիկ ըզ-

հացն քո և զըմակելի: Ո՞եծացար, ածեր կին և արարեր քեզ տուն: Դարձն զայս քո յորդիս որիք եղենքեզ: ցոյց և դու նոցա զամենայն զիւնաման զորա տեսեր դու 'ի մօրէ քում մէ: Եւ յամբառնալ նորա զձեւս իւր առ Իշտուած, ոչ ունայն դարձաւ 'ի նմաննէ,,:

“ Եգիպտացիք՝ կնոջ, տան աէնող պարտուպատշաճ պատիւը կու տային, և այս բոլոր իրենց առանձնական յիշատակարանաց մէջ յայտնի կը տեսնուի: Հարսն և քոյր, ամենայն քաղաքական և կրօնական գործառնութեանց մէջ իրաւունք ունէին մասնակից ըլլալու, և որ և իցէ մարդու մը անունը ըսուելէն վերջը մօրն անունը կը տրուէր: Ի՞ս սովորութիւնները կը բացատրէն այս պապիրին վրայ գրուած փափուկ զգացումներն:

“ Պուցէ մեր այս սիրելի քննութիւնները ազգեն մեր գտաման վրայ. բայց մեզի կ'երեայ որ այս բարոյախօսին խրատուցը և ընտանեկան ըզգացմանց այս նկարագրութեանը մէջ, որ ամենաբնական են, այն քաղցը վսեմութիւնը և այն գողտը ու փափուկ ըզգացմունքը կը գտնենք, որով կը զմայլինք ծննդոց գրոց պատմութիւնքը կարդալով,,:

Սիպերիացի օրիորդը:

(Տես երես 215)

Կրասովինայի առաջնորդները գորովեցան իրեն աս վիճակին վրայ և մէջերնին վճարմունքը յարմարցնելով որոշեցին որ ոչխարի մուշտակ մը գնեն իրեն համար, որ գեղի մէջ օ՞սո՞վ կ'արժէ. բայց դժբաղդաբար ամենէին ծախու չգտնուեցաւ. այն առանձնացեալ գեղին բնակիչներէն ոչ ուղեցիրենը չնորհել որովհետեւ դժուար էր ուրիշ գտնելը: Գեղացիները ինչուան եօթը բուպէտ տուին իջևանին

մէջ աղջկան մը որ յանձն չառաւ տալու . այս տարակուսանաց մէջ երիտասարդ առաջնորդներէն մէկը նոր հնարք մը առաջարկեց , որ շատ շահաւոր եղաւ ։ Կրասքովիայի համար : “ Փռփոխակի իրեն փոխ տանք մեր մուշտակը ; ըսաւ . կամ ինքը իմն առնէ բոլորովին և մենք մէջերնիս փոփոխենք մերը ամէն մղոն զլուխ . . . : ” մէնքը սիրով հաւանեցան . շուտ մը հաշիւ ըրին ճամբուն երկայնութիւնը և թէ քանի անգամ պիտի փոխէին մուշտակնին : Ուսաց գեղացիները կ'ուզեն իրենց հաշիւը գիտնալ , որով գժուարաւ կը խաբուին : ։ Կրասքովիա բալխիրի մը վրայ զրուեցաւ՝ իրեն մուշտակին մէջ լաւ մը պլուած . և զայն տուսղ երիտասարդը ծածկուեցաւ ինչուան նոյն ատեն աղջկան գործածած փոխաթովը և կծկուած նսակեցաւ ու սկսաւ բոլոր ձայնով երգել և բալխիրը քալցնել : Ուշտակին փոփոխութիւնն ամէն մէկ մըղնին ճշդիւ կատարուեցաւ և կարաւանը յաջողութեամբ շուտով մը հասաւ ։ Ագադերինեմպուրկ :

։ Կրասքովիա բոլոր ճամբուն երկայնութեանը միջոց անդադար կ'աղօթէր ։ Կատուծոյ որ իրենց ըրած բարեգործութեամբը չմնան առաջնորդներուն առողջութիւնը :

։ Ագադերինեմպուրկ հասնելուն պէս ։ Կրասքովիա առաջնորդներուն հետնոյն իթևանը իջաւ : Պանդոկապետին կինը լսելով մասամբ մը աղջկան դէպքերը և պատմածներնէն իմանալով որ ստակ չունի , մէկէն ’ի մէկ քաղքին մէջը առատածեռն սեպուած անձանց անունները ըսաւ իրեն , և խորհուրդ տուաւ անոնց դիմելու թէ պաշտպանութիւն և թէ ընելիք երկայն ճամբորդութեանը համար կարեւոր եղած օգնութիւնը գտնելու իրենցմէ : Ուրիշ շատերու մէջ մեծապէս զովեց ։ Ո՞իլէն անունով բարեբարց խաթունը՝ որ շատ ողորմութիւն կ'ընէր աղքատաց՝ և բարեսրտութիւնը բոլոր քաղքին մէջ ծանօթ էր : Կանաչնին մարդիկն ալ հաստատեցին որ ըսածը ճշմարիտ է . իսկ

։ Կրասքովիա թէպէտ և չհասկընար ալ պանդոկապետին կնոջը միտքը՝ ստիպէալ էր ուրիշ տեղ մը վինտուելու . իթւանն էր Ո՞ւսաց տուն հանգստեան ըսածը , որ սովորաբար ընդարձակ ձիերու ախուռ մըն է , որուն առաստաղը միայն ծածք մըն է և մէկ անկիւնը տաք ջերմանոց մը կայ որ ախուռին չորրորդ մսուր բռնած է . Ճանապարհորդները ինչպէս որ կընան՝ կը խոնին միայն այն մասին մէջ , և որոնք որ թոնիր չեն կընար ունենալ յատակը իրենց համար անկողինի տեղ կը ծառայեցնեն :

։ Երկրորդ օրը ։ Կրասքովիա առաւտանց կանուխ ելաւ՝ Ո՞իլէն խաթունին երթալու դիտաւորութեամբ . բայց ըստ իրեն սովորութեանը նախ և առաջ եկեղեցին մոտաւ , ուր այնչափ շատ մարդ կար որ երբէք ինքը այնչափ բազմութիւն չէր տեսած . կիրակի օր մըն էր . ։ Կրասքովիայի եռանդուն աղօթելը ամէնուն աջքին զարկաւ և մախաղէն և հագուստին կերպէն իմացան որ օտարական ճանապարհորդ մըն է : ։ յամէն ելելու միջոցը խաթունը մը հարցուց իրեն ով ըլլալը . ։ Կրասքովիա քանի մը խօսքով զինքը զոհ ընելու չափ պատասխան տուաւ և մէկէն ուզելով բաժնուիլ՝ իմացուց որ միտքը դըրած էր երթալու ։ Ո՞իլէն խաթունէն տեղ մը խնդրելու , որուն բարեգործութիւնը և մարդասիրութիւնը ամէնքը գիտէին : ։ Կրասքովիա նոյն ինքն Ո՞իլէն խաթունին հետ կը խօսէր , որ կը լսէր իր գովեստը առանց կասկածելու տեղիք մը ունենալու որ կեղծաւորութիւն ըլլայ աղջկան ըսածը : ։ Կը բարի խաթունը ինքզինքը ։ Կրասքովիայի ծանօթացնելէն առաջ ուզեցուարձանալ քանի մը վայրկեան շփոթցընելով . ։ Կը Ո՞իլէն խաթունը որ այնչափ կը գովեն , ըսաւ , անանկ բարերար չէ ինչ որ դու կը կարծես : ։ յանոր կ'ուզես ինձի հաւատալ ու հետսգալ՝ քեզի շատ աղէկ տեղ մը կը ճարեմ . . . :

։ Կրասքովիա իթևանին մէջ այնչափ գովեստ լսելէն վերջը ։ Ո՞իլէն խաթու-

նին վրայօք՝ գեշ գաղափար մը առաւ աս նոր ձանցած խաթունին վրայ, և ետեւ էն գնաց առանց ընդունելու իր առաջարկութիւնը՝ ու նաև չհամարձակելով ալ ժիտել: “Ի՞այց սակայն, ըստ Ո՞իլէն խաթունը՝ տեսնելով որ քայլելը կը դանդաղեցնէր, թէ որ հաստատապէս միտքդ զրած ես այն խաթունին երթալու, ահաւասիկ իր տունը ասկէ երկու քայլ վար, ներս մը տնենք և կը տեսնես թէ ինչ ընդունելութիւն կը գտնես. բայց խօսք տուր ինձի որ թէ որ զբեզ իր տունը չառնու իմ հետս պիտի գաս,,,: Ի՞րասքովիա առանց պատասխան տալու տունը մտաւ և Ո՞իլէն խաթունին աղախիններուն դառնալով հարցուց թէ իրենց տանտիկինը տունն էր արդեօք: Ի՞նչք իրենց տանտիկնոջը առջեւ եղած այսպիսի մէկ հարցման մը վրայ զարմացած՝ պատասխան չտուին ամեննեին. “Արնամ տեսնել Ո՞իլէն խաթունը, կրկնեց նորէն աղջիկը,,,: — Ա երջապէս աղախիններէն մէկը՝ Ի՞հաւասիկ, ըստ: Ի՞րասքովիա ետելը դարձաւ ու տեսնելով Ո՞իլէն խաթունը ձեռքերը բացած զինքը գրկելու համար, “Ո՞չ, ըստ, ձեռքերը պագնելով, գիտեի որ Ո՞իլէն խաթունը չիկրնար չարասիրտ խաթուն մը ըլլալ,,,: Ի՞ս տեսարանը ամենամեծ զուարձութիւն պատճառեց իրեն բարերարին: Ը ուտ մը իրեն բարեկամը՝ իրեն պէս բարեսիրտ ու գթած Դ. . . խաթունը կանչել տուաւ իրեն՝ յանձնելու համար զ Ի՞րասքովիան և մտածելու համար մէկաել թէ ինչ կերպով կրնային իրեն օգտակար ըլլալ: Ա խսաճաշիկէն ետե երբոր Ի՞րասքովիա քիչ մը ընտանեցաւ իր նոր բարերարներուն հետ, մանրամասն պատմեց ձնողացը ցաւալի: պատմութիւնը և չծածկեց իրենցմէ իր Ի՞եղերսպուրկ երթալու, և հօրը համար չնորհք խընդրելու ունեցած նորօրինակ մտածութիւնն ալ:

Ո՞իլէն խաթունը ետ չկեցուց զինքը, թէպէտ և շատ չերյուսար որ իր այս ձեռնարկութիւլ յաջողի. բայց երկուքը

մէկէն որոշեցին ինչուան գարուն իրենց քով բռնելու: Հյուրատը խիստ սասակացեր էր, ինքնին Ի՞րասքովիա ալ կը տեսնէր որ անկարելի էր այն խիստ եղանակին մէջ ձամբան շարունակելը. զինքը պահել ուզաղ խաթուններն ալ դեռ ջխօսեցան ամեննեին ինչ որ կը նային ընել. և ինչ որ իրաւցընէ ըրին վերջէն՝ իրեն ձեռնարկութեանը օգնելու համար:

Ի՞րասքովիա շատ երջանիկ էր իրենց քով: Ի՞ս մեծագոյն անձանց գորովն ու ազնուական ընտանութիւնը բարդովին նոր ախորժ մը կը պատճառեէին իրեն համար. անոր համար ալ այս իրենց մէջ անցուցած երջանիկ ժամանակին յիշատակը ոչ երբէք մտքէն կ'ելլէր: Երբոր ատեն անցնելէն վերջը կը պատմէր իր պատմութեանը այս մասը՝ Ո՞իլէն խաթունին սիրելի անունը յիշելով միշտ աչքերը երախտագիտութեան արցունքով կը լեցուէին:

Ի՞այց սակայն առողջութիւնը շատ խանգարուած էր. անտառին մէջ անցուցած դժբաղդ իրիկունը սաստիկ յօդացաւ մը պատճառեր էր՝ որ այն խիստ ցրտերով հետզէտէ աւելի սաստկացաւ: Հյարմար առիթ սեպեց Նգագերի նեմպուրկ կեցած միջոցը ինքզինքը խընամելու, և մանաւանդ կարդալ ու գրել սորվելու: Ա ենացը այս վիճակը շատ գեշ գաղափար մը կու տար իր ծնողացը վրայ, ինչուան աս ատիճան իրենց մէկհատիկի զաւկին դաստիարակութեանը անհոգացած ըլլալնուն համար, թէ որ մշտնջենաւոր աքսորանաց մտածութիւնը իրբեւ անօգուտ կամ վտանգաւոր երեցուցած ըլլար իրենց աղջիկը կրթելը ինչ և իցէ բանի մէջ ալ ըլլայ՝ ընկերութեան յետին գասերուն մէջ ապրելու որոշուած ըլլալուն համար ըստ երեւութիւն: Ի՞ս յսպիսի խորին տգիառութեամբ և բոլորովին անխնամ մեծնալը ինչուան այն ատեն, աւելի զարմանալի կ'ընեն իրեն հոգւցն վեհանձն թոփը: Ի՞նչ որ ալ ըլլայ՝ Ի՞րասքովիա ընտանեկան աշխատութեանց զբաղելով Ո՞իպերիոյ մէջ, բա-

լորովին մտոցեր էր մանկութեան առաջին հասակին մէջ սորված քիչ մը կարդալն ալ : Բայլոր ոգւով ու եռանդեամբ սորվելու տուաւ ինքզինքը , և քանի մը ամիսէն սկսաւ հասկընալ իրեն իննամակալներուն տուած մէկ ազօթազիլքը , որոնք շատ անգամ ստիպեալ էին զինքը անկէ ետ կեցընելու : Ըստ ախորժելի կու գար իրեն տեսնելը աս ազօթքներուն մէջ սրտին բընական զգացմունքները անանկ պայծառ ու սրտաշարժ ոձով մը բացարտուած , և սաստիկ փափաք մը կը զգար ուսման : “ || Ի՞շափ երջանիկ են մարդիկ , կ'ըսէր . որչափ պարտական են ազօթելու Իշտուծոյ բոլորով սըրտի լաւ մը կրթուած ըլլալով իրենց կրօնքին մէջ , այնչափ իրենց ջերմեռանդութիւնը յայտնելու համար ունեցած միջոցովնին , և այնչափ երախտագիտութեան պարտեր ունենալով նկատմամբ Իշտուծոյ իրենց ըրած այնչափ շնորհքներուն համար , :

|| Ի՞լէն խաթունը կը ժամանէր Իշասքովիայի ըրած այս անդրադարձութեցը վրայ , և կը մտածէր որ այսպիսի ձըշմարիտ եռանդեան մը առջեւ , ասանկ հոգելից ազօթքներու դէմ բնաւ անկարելի բան մը չկար : Ի՞ս մուածութիւնս ամէն բանէ աւելի համոզեց այն երկու կթած խաթունները որ օգնեն Իշասքովիայի մտածութեանը , և Իշտուծոյ ձեռքը յանձնել զինքըն որ կարծեսթէ յայտնապէս զինքը կը պաշտպանէր : || Ի՞լէն խաթունը իրեն բարեկամովը մէկտեղ ամէն ջանք ըրին միտքը փոխելու և շատ մարդասիրական ու օգտակար շնորհքներ ալ ըրին իրենց քովը բռնելու համար զինքը . բայց ամեննեին կերսով մը միտքը չէր փոխէր : Իշասքովիա Ագադերինեմպուրկի մէջ վայելած բաղդն ու հանգստութիւնը մտածելով ինքզինքը կը յանդիմանէր : “ || Ի՞նչ կ'ընէ հիմա հայրս միայնակ անապատին մէջ , կ'ըսէր , երբոր իր աղջիկը հոս կենաց ամենայն քաղցրութեան մէջ ընկղմած է , ” : Այս մտածութիւնս կը յիշեցնէր ան-

դադար ինքն իրեն Իշասքովիա . վերջապէս խաթունները որոշեցին ճամբան առաջ տանելու միջոց մը շնորհէլու իրեն :

Դարնան սկիզբը || Ի՞լէն խաթունը ինչ բանի որ պէտք կրնար ունենալ Իշասքովիա՝ ամենայն ինչ հոգալէն վերջը , բեռան նաւակի մը վրայ մասնաւոր տեղ մը բռնեց իրեն համար , և յանձնեց զինքը վաճառականութեան գործոց համար Լիժնի գացող մարդու մը , որ շատ վարժ էր այս գժուարին ճամբորդութեան :

Ուրալ լէռները անցնելէն առաջ՝ որ Լագադերինեմպուրկը Լիժնիէն կը բաշխնեն , հարկ է առուակներու վրայէն անցնիլ որ նոյն լեռներէն կը բխեն և դէպ՚ի հիւսիս կը վազեն . ինչուան Դատող նաւակով կ'երթըցուի՝ վերջը ցամաք պէտք է ելլալ լեռը կտրելու համար : Ի՞ս անցքը ոչ շատ բարձր և ոչ ալ գժուար է . լեռը անցնելէն վերջը նորէն նաւակով կ'երթըցուի այն ջրոց վրայէն որ դէպ՚ի Աղկա կը թափին : Իշասքովիա միջոց չունենալով կառք մը ճարելու և թղթատարի հետ ճամբայ ընելու , օգտակար ըրաւ իրեն Չուսովա և Վաման գետերուն վրայ եղած բազմաթիւնաւագնացութիւնները , որոնք երկաթ և աղ կը բերեն Դատուատան :

Իրեն առաջնորդը այս երկայն ճամբորդութեան մէջ ամէն արգելքներու և գժուարութեանց ճարը հոգաց , որ Իշասքովիա միայնակ առանց մեծամեծ վտանգաց մէջ ձգելու ինքզինքը չէր կրնար ընել . բայց գժբաղդաբար կիրճելու մէջ ճամբորդութիւն ընելու միջոցնին այս մարդս հիւանդացաւ և ստիպուեցաւ Վամայի եղերքին վրայ պղտիկ գեղի մը մէջ կենալու . ուրեմն Իշասքովիա նորէն միայն ինքնիրեն և անօգնական մնաց : Հաջողութեամբ կատարեց իր անցքը ինչուան հոն ուր որ Վամա Աղկայի մէջ կը թափի . անկէ վերջը նաւակը գետէն դէպ՚ի վեր երթալուն պատճառաւ ձիերը կը քաշէին . Իշասքովիա այս վերջին անց-

քին մէջ ամենավտանգաւոր դիպուածէ մը խալսեցաւ : Այստիկ փոթորկի օր մը որ ան կողմերը ստէպ կը պատահին՝ նաւալվարները ու զելով նաւակը ցամաքէն հեռացնել, ամենայն ուժով հրեցին մէկ մեծ թիով մը որ զեկի տեղ կը ծառայէր, ան կողմանէ ուր որ բազմութիւն անձանց նաւակին եզերքին վրայնստած էին, և ժամանակ չունեցան մէկէն ետ քաշուելու . անցորդներէն երեք հոգի՝ որսնց մէջն էր նաև Ի՞րասքովիա՝ գետոյն մէջ ինկան : Շուտով մը երեքն ալ հանեցին . Ի՞րասքովիա ամենեին չէր վիրաւորուած, բայց ամընալով ամենուն առջեւ զգեստները փոխելու՝ թողուց որ վրան չորսան . ասոր վրայ սաստիկ հարբուխէ մը բրոնուեցաւ որ շատ վնասակար հետևանք ունեցաւ իր առողջութեանը նկատմամբ :

Ի՞րագերինեմպուրկի խաթուները՝ որ Ի՞րասքովիայի առաջնորդին յանձնած էին՝ Իիժնիէն անդին Ճամբորդութիւնը շարունակելու համար հարկաւոր եղածը հոգալու,՝ Իիժնիի մէջ զինքը բնաւ մէկու մը չէին յանձնած՝ ուր որ Ի՞րասքովիա ալ միտք չունէր կենալու . ուստի երբոր հասաւ՝ անձանօթ և առանց պաշտպան մը ունենալու մնաց : Ի, աւալվարները գետեզերքը ձգեցին զինքը իր փոքրիկ բեսովը՝ որ Ա՞իլէն խաթունին ինամքովը աւելի ստուարացած էր :

Այսմուրջին առջեւ՝ ուր որ սովորաբար նաւակներուն կենալու տեղն է Ա ոլկայի ափանցը վրայ՝ կայ եկեղեցի մը և կրօնաւորաց վանք մը բարձր դրքի վրայ . Ի՞րասքովիա գեպ՝ ի հոն սկսաւ երթալի իր սովորական աղօթքներն ընելու համար, միտքը դնելով ետքը մէկէն երթալու մէկ տեղ մը գտնելու իրեն համար քաղքին մէջ :

Եկեղեցին մոնելուն պէս՝ որ անապատ երեցաւ իրեն, լսեց վանդակներու ետևէն կուսանաց երեկոյեան երգը որ լմայնելու վրայ էին, և իբրև բարեգուշակ գեպքը մը սեպեց այս բանս : (Կ մը՝ թէ որ Ի՞ստուած աղացանացս

հաճի, կ'ըսէր ինքնիրեն, ես ալ նոյն պէս քօղով պիտի ծածկուիմ, ուրիշ զբաղմունք չունենալով բայց եթէ չնոր հակալ ըլլալ Ի՞ստուածոյ ինծի ըրած չնորհացը :

Ի քեւ մոնելու վրայ էր երբոր եկեղեցիէն դուրս ելաւ . քանի մը վայր կեան դրան առջեւ կանկ առաւ ու զարմացած դիտեց առջեւը բացուած գեղեցիկ կիտարանը : Իիժնի՝ Իովիկորոտքազքը () քայի և Ա ոլկայի գետախառնունքին վրայ շինուած՝ իրեն կեցած տեղէն սքանչելի և քիչ տեսնուած տեսարան մը ունի . անոր ընդարձակութիւնը անհուն երեցաւ իրեն և կերպով մը վախ կ'ազդէր վրան :

Իշխմէն ելլելէն վերջը Ի՞րասքովիա միայն նիւթական վտանգներու հանդիպած էր, և առաջուց պատրաստուած ալ էր սովոյ, սաստիկ ցրտերու և ինչ չուան մահուան գէմ ալ դնելու . բայց մարդկանց ընկերութիւնը Ճանչնալէն վերջը կը տեսնէր որ ուրիշ տեսակ արգելքներ ալ կային առջեւը, որոնց գէմ դնելու համար ամենայն քաջարտութեամբն հանդերձ բաւական չէր : Ի՞նապատէն դուրս ելլելէն վերջը կը զգար մեծամեծ քաղաքաց ահաւոր միայնութիւնը, ուր որ աղքատը բազմութեան մէջ ալ միայն է, և ուր որ ահագին զարմացմամբ չտեսնող ազքէր և խուլականջներ կը տեսնէ իր չորս կողմը :

Ի՞րագերինեմպուրկի խաթուներուն հետ ծանօթանալէն ետեւ, վայելչութեան և դիւրութեան նոր զգացմունք մը ստանալով և թերեւս թեթեւ բարձրամտութիւն մըն ալ աւելի դըժուար կ'երեային իրեն ըրած Ճամբորդութիւնները՝ առ որ կը ստիպէր զինքը իր վիճակը : “ Ի՞սոնս, կ'ըսէր ինքնիրեն, ուր կրնամմէյմ” ալ անանկ բարեկամներ գտնել զորոնք կորսընցուցի : Ի՞նաւասիկ հիմա հազար մզոններով հեռու եմ իրենցմէ . Բնչ պիտի ընեմ երբ Ի՞ներերսպուրկ հասնիմ ու կայսերական պալատին մօտենամ, ես որ կը վախեմ հոս խեղջ իջւանի մը ներկայանալու , :

Այս անդրադարձութիւնները այնպէս սաստիկ ազգեցութիւն մը ըրին հոգւոյն վրայ, որ նախ խորին վշատութիւն մը եկաւ վրան և աչքերը լեցուեցան արցունքով, և սկսաւ վշտանալ ու վախնալ որ չըլլայ թէ հօրմէն 'ի զուր հեռացած ըլլայ. բայց քիչ մը վերջը մէկէն յանդիմանեց ինքզինքը իր տկարութեանը և կատարելապէս Իշտուծոյ վրայ չվստահանալուն համար. ներումն ինդրեց պահապան հրեշտակէն՝ և Կնքն եղաւ անշուշտ, կ'ըսէր կենացը այս գիտուածին վրայ խօսելով, որ եկեղեցի մտնելու և Իշտուծմէ արիութիւն ինդրելու խորհուրդն ազդեց ինծի իմ լքմանս մէջ. . . :

Իրաւցնէ վազեց մտաւ եկեղեցին Իշտուծոյ օգնութիւնը հայցելու, այն միջոցին որ կուսան մը դուռը գոցելու վրայ էր, բայց Իշտափովիա շտեսաւ զինքը. կուսանը զարմանալով այս օտարական աղջկան շտապողական կերպին և եռանդուն աղօթելուն վրայ, քովը մծտեցաւ ու հարցուց իրեն ովլ ըլլալը և իմացուց որ եկեղեցին գոցելու ժամանակը հասած էր: Իշտափովիա քիչ մը շփոթեցաւ ու անկեղծութեամբ պատմեց իրեն այնպէս նորօրինակ կերպով եկեղեցին մտնելուն պատճառը և միանդամայն իջևանի մէջ բնակելու համար ունեցած գժկամակութիւնը, և լմնցուց խօսքը աղաչելով որ վանքին մէջ տեղ մը շնորհէ իրեն: Կուսանը պատասխան տուաւ որ օտարականները չէն կրնար վանքին մէջ բնակիլ, բայց թէ աբբասուհին կրնար ուրիշ կերպով օգնել իրեն: “Ո՞րայն այս գիշերուան համար կենալու տեղ մը կը ինդրեմ, վրայ բերաւ Իշտափովիաքը սակ մը ցուցնելով որուն մէջ քանի մը կտոր ստակ կար: Կթած խաթուններ այս միջոցս շնորհեցին ինծի որ ուղրմութեամբ կարենամ ասլրիլ քիչ մը ժամանակ, ուստի միայն այս գիշերս է որ կը ինդրեմ վանքն անցընել. վաշը պիտի շարունակեմ իմ ժամբաս . . .”

Կուսանը հաւանեցաւ զԻշտափովիան աբբասուհիոյն տանելու: Պա-

տուական մայրապետն աղօթքի հետ էր երբոր իրենք խուցը մնան. կուսանը զրան մէջը կանկ առաւ ու ծնկի վրայ եկաւ. նոյնպէս ըրաւ նաև Իշտափովիա ալև աղաչեց Իշտուծոյ որ աբբասուհիոյն սիրաը շարժէ իր վրայ. երբոր աբբասուհին աղօթքը լմնցուց Իշտափովիայի, քով մծտեցաւ որ չըքած էր և քաղցրութեամբ մը վեր հանեց զինքը: Իշտափովիա իր անունը և Ճամբորդութեանը վախճանը պատմեց անոր. ցուցուց անցագիրը և աղաչեց որ նոյն գիշերուան համար զինքը վանքին մէջ ընդունի իրբւե հիւր, որ շնորհեց իրեն: Վիշտափենէն բաղմութիւն կուսանաց հետաքրքրութեամբ աբբասուհիոյն խուցը թափեցան և Իշտափովիայի չորս կողմը աւին, որ կերպ կերպ ըրած հարցմունքներուն պատասխան կու տար անդրադար, և անսանկ պարզութեամբ և բնական Ճարտարիսութեամբ մը պատմեց Ճամբորդութեանը դժնդակ անցքերն որ մտիկ ընող կուսաններէն շատը լացուց և ամենուն սիրաը յափըշտակեց: Ամենայն հոգ ու խնամք ցուցուցին. աբբասուհին զինքը իրեն խուցը պառկեցուց և մէկէն սկսաւ մտածելոր զինքը վանքը բռնէ և նորընծայից թուոյն մէջ մտցընէ:

Իշտափովիա արգէն շատոնց միտքը զրած էր որ իր ձեռնարկութիւնը յաջողցնելէն վերջը կուսան ըլլայ: Տեսանք առաջ՝ որ ինչուան Խաղպերինեմ պուրկ հասաւ, կը կարծէր թէ Վիշտափը Իշտերասուրկի Ճամբուն վրայ կ'իյնայ և հօն միտքը դրած էր ու խտելու յաջողութեամբ դառնալուն միջոց. կը յաւսար որ անցնելու ժամանակ կը ընար հոչակաւոր գետնադամբանները՝

1. Քիէլի գետնադամբանները ստորերկրեայ ընդարձակ սրահներ են, մայր եկեղեցւոյն մօտ, զոր հին և հարուստ վանքի մը կրօնաւորները կը պահպանէն: Այս գետնադամբաններուն մէջ կը գտնուին բազմաթիւ յոյն սուրբեր, որոնց անարատ մարմինները գրուած են 'ի յարգութիւն ժողովրդեան և պատեալ են ճոր հանդերձներով և միայն երեսնին, ձեռքերնին և ոտքերնին կ'երեկի: Այս ցամաքեալ մարմինները նաևն փայտին դոյնն ու պնդութիւնն ունին:

տեսնել և անոնց մէջը եղած սրբոց մաս սունդներուն իրեն յարգութիւնն ընել, և հոնտեղի կուսանաց վանքերուն մէջէն մէկը իրեն ապագայ բնակութեանն համար ընտրել: Այսամունքը իմանալէն վերջը ամենենին դժուարութիւն չանեց՝ իմանի վանքը ընտրելու իրեւ իրեն վերջին միայնարան բնակութեան. զոր միայն խոստացաւ աբբասուհւոյն. բայց երբորնա կը ստիպէր յայտնապէս ուխտելու. Ի՞րասքովիա յանձն շառաւ. “Արնամ գիտնալ թէ ինչ կը պահանջէ ինձմէ Եստուած: Ե՛ռզեմ, կը փափաքիմ հոս լննցնել իմ օրերս՝ և թէ որ այս է Եստուծոյ կամքը՝ ով կրնայ ընդդիմանալ,,:

Հաւանեցաւ քանի մը որ՝ Աիմանի կենալու, որպէս զի հանգի և Եստուած երթալու համար միջոց գտնէ. բայց շատ շանցաւ, զգաց որ յոգնած ու նեղուած էր և վտանգաւոր հիւանդութեան մը մէջ իյնալէն ետև սաստիկ հազ մը ստացեր էր որ զինքը շատ անհանգիստ կ'ընէր: Վիչ ատենէն սաստիկ ջերմէ մը բռնուեցաւ. բայց թէպէտ բժիշկներն անգամ յուսահատեցան կենացը վրայ՝ ինքն ամենենին նեղութիւն մը չէր ցուցընէր: “Ուեմ կարծեր, կ'ըսէր, որ իմ ժամանակս դեռ հասած ըլլայ, և կը յուսամ որ Եստուած պիտի շնորհէ ինձի կատարելու իմ ձեռնարկութիս,,: Կրացնէ առողջացաւ, թէպէտ և ծանր ծանր, և գարնան գեղեցիկ եղանակին մնացած մասը վանքին մէջ անցուց: Կրեն այն տկար վիճակին մէջ չէր կրնար ոտքով և ոչ իսկ թղթատար կառքերու վրայի ճամբորդութիւնը առաջ տանիլ, և միջոց չունենալով իրեն համար մասնաւոր հանգիստ կառք մը ճարելու, ստիպուեցաւ սպասելու որ ճամբաները ընթանալի ըլլան բալխիրի համար, որով կարենայ առանց հասարակ կառքերէն նեղուելու Ինդերսպուրկ երթալ:

Ի՞սյ միջոցին մէջ անպակաս առաջիկայ կը գտնուել. ժամերգութեան և անանի ճշգութեամբ կը պահէր վան-

քին ամէն կանոններն որ թերեւ շատ արգելք եղաւ իրեն շուտով առողջանալուն, և միանգամայն ուսմունքը կատարելագործեց: Իր այսպիսի ընթացքով աբբասուհւոյն և բոլոր կուսանացներմանն արժանի եղաւ, որոնք ամսկեղծ սիրով կապուեցան հետը շտարակուսեցան ամենենին իրեն խոստմանը վրայ թէ օր մը նորէն պիտի գար իրենց վանքին մէջ կուսան ըլլալու համար:

Ա երջապէտ երբոր ձմեռուան Ճամբաները բացուեցան, Ճամբայ ելաւ դէպ՚ի Եստուած գոց բալխիրով մը ուրիշ Ճանապարհորդաց հետ մէկտեղ: Ի՞րասքուհին չկարենալով զի՞րասքովիա իր ձեռնարկութենէն ետ կեցընել, յանձնարարական թուղթ մը տուած ձեռքը տանելու իրեն բարեկամ խաթուններէն մէկուն այսինքն Եստուածնակող Ե.*** խաթունին, և վստահացուց զինքը որ կրնար միշտ իրեն տունը իրեւ ապահով ապաստանարան մը սեպէլ և ինչ որ ալ ըլլար Ճամբորդութեան վախճանը, հոն սիրելի զաւկի մը պէտ ընդունելութիւն կը գտնար:

Ի՞րասքովիա առանց նեղութեան կամ արկածի մը հանդիպելու հասա Եստուած: Ե.*** խաթունը շատ մեծ խնամք ցուցուց վրան և քանի մը որ քովը պահէց ինչուան որ Ինդերսպուրկ գացող Ճամբու ընկեր մը գտաւ: Ի՞րասքովիա Ճամբայ ելաւ վաճառականի մը հետ որ իրեն յատուկ ծիերովը կը ճանապարհորդէր, և քսան օր Ճամբու վրայ մէկ տեղ մը կեցաւ: Ա պազերի նեմպուրկի խաթուններուն տուածներէն զատ յանձնարարական թուղթ մ'ալ ընդունեցաւ Ե.*** խաթունէն առ իշխանուհին Ծ.*** խաթունը՝ որ մեծարելի և հասակաւոր խաթուն մ'էր: Կր այսնպաստներովն վերջապէտ հասաւ Ինդերսպուրկ փետրուարի Կէսին՝ Եստուարիայէն ելլելէն գրեթէ 18 ամիս վերջը, նոյն արիութեամբ և յուսով որ ունէր ուղեւորելուն առաջին օրը: Վաւ առաջնորդին տունը Ի՞րասքուհինսպի ջրանցքին վրայ. քիչ մը ա-

տեն կարծես թէ կորսուածի պէս մնաց քաղքին ընդարձակութեանը մէջ, քանի որ գեռ ինչ ընելիքը չէր գիտէր ու շուարեր եր թէ ինչպէս պիտի կարենայ յանձնարարական թղթերը՝ որոնց որ ուղղուած էր՝ ձեռքերնին հասցընել. աս բանս իրեն համար անգին ժամանակի մը կորուստ եղաւ :

Ա աճառականը իրեն գործոցը զբաղած՝ մոռցաւ բոլորովին զի՞րապօվիա թէպէտ և յանձն առած էր (Ո.*** իշխանուհւոյն տունը տանելու զինքը. բայց գեռ խստմունքը ըկատարած սահպուեցաւ գեպ՝ ՚ի Ռիկա ձամբար ելլել, և յանձնեց զի՞րապօվիա իր կնոջը որ շատ մարդասիրութեամբ կը վարուեր հետը, բայց առանց ամենելին իրեն խորհրդոցը կատարմանը օգնելու :

Դ.*** խաթունին նամակը ՚ի, եւագետոյն միւս կողմը բնակող խաթունի մը ուղղուած էր. և որովհետեւ հասցեն որոշ և մանրամասն զրուած էր՝ Ռիրաքովիա վաճառականին ձամբայ ելլելն քանի մը օր վերջը անոր կնոջը հետ ձամբայ ելաւ գեպ՝ ՚ի Ա ասիլի-()ս. զրով : Ռայց ՚ի, եւա ձաթուած էր և սառերը մօտ էին լուծուելու և ոստիկանները չէին թողուր անցնիլ . Ռիրաքովիա այս ձախորդութեան վրայ վըշտացած ետ դարձաւ : Լոյս տագնապին և մտածութեանցը մէջ վաճառականին տունը գտնուող անփորձ մարդ մը ձախող խորհուրդ մը տուաւ իրեն, որ աղերսագիր մը տայ ծերտկուտին իրեն հօրը քննութիւնը նորէն սկսելու համար, և յանձն առաւ այս բանս յարմարցնելու համար անձամբ զրագիր մ'ալ գտնելու : Ռիրաքովիա Ռոպոլսքի քաղաքապետին ընծայած աղերսագրին յաջողիլը մտածելով համոզուեցաւ : Ռիրուեցաւ ուրեմն անդէպ ոձով աղերսագիր մը և տրուեցաւ Ռիրաքովիայի ձեռքը առանց ամենելին սորվեցնելու թէ ինչ կերպով պիտի ներկայանար : Լոյս խորհուրդս արգելք եղաւ Ռիրաքովիայի փութով իրեն յանձնարարութեան թղթերը որոնց որ ուղղուած էին ձեռքերնին հասցնե-

լու, որով շատ աւելի օգուտ կրնար ըլլալ իրեն :

ՔՍԱՎԻԵ ՏԸՄԴՐԸ

Կը շարունակոյի :

Եռունկ:

Լ, թէ Լ, գուարդ Լունկ անգղիական եկեղեցւոյն քաջ աստուածաբան մը միայն եղած ըլլար, իր կեանքն յետագյից այնչափ հետաքրքրական բան մը չէր ըլլար : Լոյ արդիւնքն անծանօթ էր Լուրոպիոյ, և հայրենեացը մէջ անունը գրեթէ մուցուած էր . բայց այնպիսի քերգող մը և նախատիպ զրիչ մը ըստին քեան Աուիֆդի, Շ աթսալըրի, Փոփի, Լատիսընի, Աիշարտնընի և ասոնցնման ներուն հաւասար կրնայ ընկերել յանմահութիւն, որոնց ինքը բարեկամ եղած էր, կամ ուսումնական ընկեր : Ամն ունեցաւ Դիտոլ ըստուած համբաւաւոր օրագրին, և աւելի երկարակեաց եղաւ քան զվերջինն այն անուանի հեղինակաց խմբին, որոնք Կնգղիոյ փառքը պայծառացուցին :

Լունկ վերսոյիշեալ մատենագրաց պէս կիրթ ախորժակ չուներ . բայց կարծես թէ չուզեց ալ ունենալ : Հետեղութեան չափազանց թշնամի ըլլալով, իր երեւակայութիւնն ինքն իրեն թողուց . և ինչպէս որ նախատիպ ըլլալու ծնած էր, ուզեց այնպէս ալ մընալ և իբրեւ իրեն յատուկ պարտք մը ՚ի գործ դնել : Աովորսական ձամբաները թողլով, գնաց գերեզմանաց մէջ իր անմահութեան արձանը կանգնելու . և կարծես թէ ուզեց այնպիսի տեղ մը զայն դնել, ուր վախ չկար ուրիշ նախանձորդէ մը հետեւուելու : Ռայց թէ և մի և նոյն ախորժակ և մի և նոյն ցաւեր զուրիշներն ալ հոն ձգելու ըլլային, մէկէն կը տեմնային անոնք, որ եթէ դիւրին է աւելի կանոնաւոր և բարեյարմար կոթող մը կանգնել, բայց